

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի 18.05.2013 թ. նիստի

Մասնակցությամբ՝

- | | |
|--|------------------|
| ՀՀ Արմավիրի մարզպետ՝ | Ա.Ղահրամանյանի |
| ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ | Դ.Սամսոնյանի |
| ՀՀ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ | Ա.Ղուկասյանի |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ | Հ.Հարությունյանի |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝ | Ա.Պողոսյանի |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ | Ա.Այվազյանի |

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության գյուղատնտեսության բաժնի պետ՝

Վ.Աբրահամյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության գյուղատնտեսության բաժնի
գլխավոր մասնագետ՝

Մ.Սարիբեկյանի

ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական
վարչության ճգնաժամային կենտրոնի ավագ
հրահանգիչ՝

Գ.Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային
ստորաբաժանումների ղեկավարների

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 12.05.2013թ. և 17.05.2013թ. տեղի ունեցած կարկտահարությունների հետ կապված համայնքային հանձնաժողովների կողմից կազմված և մարզային հանձնաժողով ներկայացված ակտերը քննարկելու և համաձայնեցված ակտերը արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողով ներկայացնելու մասին

/ Ա.Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ /

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը օրակարգային հարցի առնչությամբ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ համայնքային հանձնաժողովներն արդեն ավարտել են 2013 թվականի մայիսի 12-ին մարզի 43 համայնքներում տեղի ունեցած կարկտահարության հետ կապված համապարասխան ակտերի կազմման

աշխատանքները, որոնք ամփոփվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունում: Մարզպետը միաժամանակ նշեց, որ 2013 թվականի մայիսի 17-ին նորից կարկտահարություն է փետի ունեցել, որի հետևանքով փոստել են նաև մարզի Շենիկ, Արգինա և Քարակերպ համայնքները, որոնց արդյունքները նույնպես արդեն ամփոփվել են: Ընդհանուր առմամբ վնասվել են մարզի 46 գյուղական համայնքների գյուղատնտեսական մշակաբույսերը, ցանքատարածություններն ու այգիները: ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կողմից ներկայացված ամփոփ տեղեկանքի համաձայն 2013 թվականի մայիսի 12-ի և մայիսի 17-ի կարկտահարության հետևանքով մարզի գյուղացիական տնտեսություններին պարճառված վնասի չափն ունի հետևյալ պատկերը.

h.h.	Մշակաբույսի անվանումը	Վնասված տարածությունը /հա/	% նորոգված տնտեսություններ	Քերթավությունը g/հա	Շուկայական գինը դրամ/ցենտներ	Վնասի չափը /մլն.դր./
1	Խաղող սեղանի	1037.76	85	259.5	25000	5722.60
2	Խաղող տեխնիկական	1802.88	80	146.5	13500	2852.52
3	Ծիրանենի	1381.90	75	112.9	15000	1755.19
4	Դեղձենի	430.5	75	213.7	20000	1379.97
5	Սալորենի	537.6	75	188.8	15000	1141.86
6	Կեռասենի	466.6	75	118.2	70000	2895.49
7	Խնձորենի	76.955	75	143.8	20000	165.99
8	Տանձենի	14.585	75	131.0	15000	21.49
9	Այլ պտղատուներ	108.69	75	100.6	25000	205.02

10	Լոլիկ	753.73	90	457.0	6000	1860.05
11	Վարունգ	215.0	90	295.2	10000	571.21
12	Պղպեղ	162.37	90	339.1	20000	991.07
13	Սմբուկ	221.649	90	339.1	6000	405.87
14	Այլ բանջարեղեն	861.9	90	339.1	5000	1315.22
15	Կարտոֆիլ	212.165	60	325.8	8000	331.79
16	Ձմերուկ	582.97	90	385.3	10000	2021.57
17	Սեխ	133.182	90	385.3	15000	692.75
18	Դդում	13.210	90	385.3	5000	22.90
19	Ցորեն	1070.28	80	27.6	13000	307.21
20	Գարի	123.20	80	26.9	15000	39.77
21	Եգիպտացորեն	168.83	90	42.6	15000	97.09
22	Արևածաղիկ	601.913	90	21.2	40000	459.38
23	Ծխախոտ	22.81	90	87.3	7000	12.55
ԸՆԴԱՄԵՆԸ		11000.679				25268.56

Անհրաժեշտ է համայնքներից մարզային հանձնաժողով ներկայացված և համաձայնեցված ակտերն ու ամփոփ տեղեկատվությունը ներկայացնել պարկան մարմիններին՝ համապատասխան ընթացք փալու նպատակով:


Հանձնաժողովը որոշում է՝

1. 12.05.2013թ. և 17.05.2013թ. տեղի ունեցած կարկտահարությունների հետ կապված համայնքային հանձնաժողովների կողմից կազմված և մարզային հանձնաժողովում քննարկման արդյունքներով համաձայնեցված ակտերը/կցվում

է ամփոփված ցուցակի տեսքով/ և ամփոփ տեղեկատվությունը ներկայացնել
արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող
հանրապետական հանձնաժողովին:

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի քարտուղար՝



Մ. Քարտաշյան



Դ. Դավթյան

